ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ԿԱՐԷՆ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ
armmomik@hotmail.com

ԺԲ. դարի հայ մատենագրութեան նշանաւոր հեղինակներից է Սամուէլ Անեցին՝ Անիի Կաթողիկէ Եկեղեցու երէցը, ԺԱ.-ԺԲ.դդ. նշանաւոր մատենագիր-փիլիսոփայ Յովհաննէս Սարկաւագ Վարդապետի աշակերտը: Անեցին հայ մատենագրութեան մէջ նշանաւոր է իր Ժամանակագրութիւնով, որը կազմել է Հռոմկլայում աթոռակալող կաթողիկոս Գրիգոր Գ. Պահլաւունու (1113-1166) պատուէրով: Ժամանակագրութիւնն աւարտուել է 1163 թուականով, ինչը երեւում է այս աշխատութեան մեզ հասած հնագոյն ընդօրինակութիւնից (Մատենադարան, ձեռ. թիւ 5619), որը կատարուել է 1176ին, Կամրջաձորի վանքում:

Սամուէլ Անեցու Ժամանակագրութեան ձեռագրերը հեղինակային բնագրից բացի պարունակում են յետագայի գրիչների կատարած բազմաթիւ ընդմիջարկութիւններ ու յաւելումներ: Արշակ Տէր-Միքելեանը 1893ին Վաղարշապատում ձեռքի տակ ունենալով 14 ձեռագիր (մեծագոյն մասը՝ ԺԷ. դ.) Անեցու երկը հրատարակել է դրանցում եղած յաւելումներով[1]:

Ժամանակագրութեան ամենավաղ՝ հեղինակի ապրած դարաշրջանի երեք ձեռագրերի (Կամրջաձորի, Հոռոմոսի, Անիի օրինակների) ուսումնասիրութիւնից, պարզ դարձաւ, թէ տեղեկութիւնների ինչ պաշար է ներկայացրել անեցի պատմիչը[2]: Դրանից դուրս եղած նիւթը տարբեր ժամանակ կատարուած յաւելումներ են, որոնց մէջ աւելի մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում վաղ թուագրուող ձեռագրերի տուեալները:

Այս տեսակէտից ուշադրութեան է արժանի Մատենադարանի թիւ 1897 ձեռագիրը, որը Անեցու Ժամանակագրութիւնով սկսուող ժողովածու է, Հայրապետ Վարդապետի ընդօրինակութեամբ: Այս ձեռագիրը Տէր-Միքելեանի ձեռքի տակ եղած մատեաններից ամենահին օրինակն է եղել, սակայն հրատարակչի պատշաճ ուշադրութեանը չի արժանացել: Դրա պատճառը թերեւս այն էր, որ ձեռագրում եղած տեղեկութիւննե-

ը միւս մատեանների համեմատ աւելի համառօտ են եւ որոշ չափով՝ տարբեր։ Այս մատեանի ունեցած տարընթերցումների միայն մի մասն է տեղ գտել Տէր-Միքելեանի հրատարակութեան տողատակերում։

Տէր-Միքելեանը առաջաբանում ձեռագիրը (որը Էջմիածնի մատենադարանում 1695 թուահամարն ունէր) ներկայացնում է հետեւեալ կերպ. «քառածալ, թղթեայ, բոլորագիր եւ վնասուած, պարունակում է եւ պատճառ սահմանաց գրոցն...։ Ունի եւ համառօտ յուշագրութիւններ. Հայրապետ վարդապետ եւ մեղապարտ գրիչ յիշեսջիք ի Քրիստոս...։

Այս օրինակն հասցնում է մինչեւ 1179 թիւն, ունի լաւ ընթերցուածներ եւս, սակայն շատ պակասաւոր է եւ յաճախ խառն»[3]։

Ձեռագիրը հրատարակչին պակասաւոր է թուացել այն պատճառով, որ միւս մատեաններում Անեցու բնագիր մուծուած յաւելումները շատ աւելի մեծածաւալ են, մինչդեռ այստեղ ժամանակագրական միաւորներն աւելի փոքրաթիւ են։

Մատենադարանի ձեռագրացուցակում այս մատեանի գրչութեան ժամանակ է համարւում ԺԳ. դարը[4], թէեւ Հայրապետ Վարդապետի թողած յիշատակագրութիւններում ժամանակի ու տեղի վերաբերեալ որեւէ նշում չկայ։ Արտաշէս Մաթեւոսեանը դրանք հրատարակել է ԺԳ. դարի անթուական յիշատակարանների շարքում[5]։ Վազգէն Ցակորեանը ձեռագիրը համարել է Անեցու Ժամանակագրութեան երկու հնագոյն ձեռագրերից մէկը[6]։

Ժամանակագրութեան սկիզբը թերի է. պակասում է առաջին թերթը։ Տեքստը սկսւում է «...թեւակոխեացուք ձեռնրտու ունելով զնոսա, զԵւսեբի ասեմ...»[7] *եւ աւարտւում Անեցու հնագոյն ձեռագրերից յայտնի վերջին՝ Ներսէս Շնորհալու մահուան եւ Գրիգոր Տղայի աթոռակալութեան մասին տեղեկութեամբ։ Գրչական ակնառու միջամտութիւններ չունի. Հայրապետի գրածն անխաթար է պահպանուել։ Սակայն ի տարբերութիւն հնագոյն ձեռագրերի, այս մատեանը պատկանում է յաւելումներ պարունակող խմբին. կա՛մ նախօրինակն արդէն այդպիսին է եղել, կա՛մ Հայրապետ Վարդապետն է այդ փոքր յաւելումների հեղինակը։ Նա ոչ միայն մի քանի նոր տեղեկութիւններ է մուծել, այլեւ որոշ դէպքերում Անեցու տեղեկութիւնները վերաշարադրել կամ դրանց բացատրական բնոյթի յաւելումներ է կատարել։ Դատելով Հայրապետի յիշատակագրութիւններում առկայ որոշ արտայայտութիւններից՝* «շարագրեցի զսոսա ի շահ եւ ի յաւգուտ մանկանց եկեղեցւոյ..., յիշեայ, ով պատուական վերծանող եղբայր..., ով աստուածասէր ընթերցող ուսմամբ»[8], *կարելի է ենթադրել, որ յաւելումների հեղինակը հենց ինքը՝*

Հայրապետ Վարդապետն է։ Այսինքն, գուցէ «ուսմամբ» ընթերցողների գործը հեշտացնելու համար նա Անեցու յայտնած տեղեկութիւններին փոքրիկ բացատրական յաւելումներ է արել։ Սակայն, եթէ անգամ նրա օգտագործած նախօրինակն ունեցել է այդ յաւելումները, որն այս պահին անհնար է ճշտել, մի հերթական «Անանուն» հեղինակ երեւան չբերելու համար - թէկուզ որոշ վերապահումով - յաւելումների հեղինակին այսուհետեւ կը կոչենք հենց Հայրապետ Վարդապետ անունով։

Ձեռագիրն ի տարբերութիւն Անեցու Ժամանակագրութեան միւս, հիմնականում փոքրաչափ մատեանների, բաւական մեծ թերթերի վրայ է գրուած (25,5x16,5սմ), սիւնակները լայն են, տեքստը՝ դիւրընթեռնելի։

Թիւ 1897 մատեանի բնագիրը հնագոյն ձեռագրերից նաեւ այլ տարբերութիւններ ունի, օրինակ, Բագրատունեաց անկման նշումից յետոյ Անեցու՝ ժամանակագրական աղիւսակի մէջ գրած փոքրիկ «ողբն» այստեղ խապառ բացակայում է (էջ 68ա)։ Գրիչը երբեմն այնքան էլ չի խորացել գրուածի բովանդակութեան մէջ եւ «Սկիզբն շրջանի Ը եկին»[9] հատուածի փոխարէն գրում է. «Սկիզբն Մ եկին շրջանի» (էջ 71ա)։

Մանօթանանք յաւելումներից մի քանիսին։ Բնագրային տեղեկութիւնը՝ «Խզբլն էառ զԼաւռէ եւ զուխտսն սուրբ», շարունակուած է՝ «զՀաղբատ եւ Սանահինն այրեաց» (71բ)։ Նոյն էջում գրիչը գանց է առել կամ վրիպել Անեցու նշումը՝ «ՇՃԹ մեռաւ Սանուչէ ամիրայն Անւոյ», իսկ դրա փոխարէն ունի նոր նշում Հայոց ՇԿԲ (1113) թուականի դիմաց՝ «Մերժեցան ի հայրենեաց որդիքն Կիւրիկէի» (էջ 71բ)։

Մինչ այժմ այս տեղեկութիւնը յայտնի է եղել ԺԳ. դարի երկրորդ կէսի գործիչներ Ստեփանոս Օրբէլեանի եւ Մխիթար Այրիվանեցու Ժամանակագրութիւններից։ Օրբէլեանն ըստ էութեան շարունակել է Անեցուն (Ժամանակագրութեան նրա օգտագործած օրինակը հասել է մինչեւ 1193), եւ յայտնի չէ, թէ արդեօ՞ք հենց ինքն է հեղինակային մասում լրացումներ կատարել։ Մեր նշած տուեալը նրա մօտ այսպիսին է. «ՇԿԲ յայսմ ամի մերժեցան ի հայրենիս յիւրեանց որդիքն Կիւրիկէի»[10]։ Նոյն տեղեկութիւնը մեր ձեռագրին աւելի հարագատ շարադրմամբ տեղ է գտել նաեւ Այրիվանեցու մօտ՝ 1111-1121ի դէպքերի հատուածում՝ «Մերժեցան ի հայրենեաց որդիքն Կիւրիկէի թագաւորի»[11]։

Փաստօրէն, մի տեղեկութիւն, որը մինչեւ այժմ յայտնի էր Օրբէլեանի ու Այրիվանեցու հեղինակութեամբ[12], մուծուած է եղել նաեւ Անեցու Ժամանակագրութեան՝ Հայրապետ Վարդապետի ընդօրինակութեան մէջ։ Դրանից դատելով ներկայ ձեռագիրը կարող է լինել ամենավաղը ԺԳ. դարի գործ։

Ըստ հնագոյն ձեռագրերի՝ Անեցին գրել է. «ԾՁԸ (1139) շարժմամբ կործանեցաւ Գանձակ քաղաք»[13], *հրատարակութեան մէջ, ըստ յետագայի յաւելումների, շարունակուած է՝* «եւ սուրբ վարդապետքն՝ Գրիգոր եւ Սարգիս՝ ընկղմեցան եւ եկեղեցին Հաղբատայ փլուզանի եւ ի նոյն ամի Խարասնդուռն զԻւանէ եհար ի Գանձէնքն»[14]: *Հայրապետ Վարդապետի ձեռագրում նոյն հատուածը՝ աղիւսակներից աջ՝* «ԾՁԸ (1139) շարժն սաստիկ կործանեաց զԳանձակ շահաստան, յորում եւ փլաւ սուրբ կաթողիկէն Հաղբատ», *աղիւսակից ձախ՝* «Այլ եւ մեռանին մին հարուածոյ Բ (2) սիւնքն հաւատոյ Գրիգոր եւ Սարգիս վարդապետք, որդի Թոքակերի եւ Կորխեցին կոչեցեալ. եւ ի նոյն ամի Խարասնդուռն զԻւանէ եհար ի Խաչենք» (*էջ 75ա*):

Այն, որ Թոքակերի որդի Գրիգոր վարդապետը[15] *մահացել է Գանձակի երկրաշարժի ժամանակ, յայտնի էր ԺԳ. դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու Պատմութիւնից՝* «...մեռաւ ի շարժմանէն մեծ վարդապետն Գրիգոր՝ հանդերձ այլ բազմութեամբ արանց եւ կանանց եւ մանկտոց...»[16]: *Սարգսի մասին աւելի քիչ տեղեկութիւններ են յայտնի*[17]: *Հայրապետ Վարդապետի ձեռագրի շնորհիւ իմանում ենք նրա մականունը՝ Կորխեցի*[18]:

Հայրապետ Վարդապետի ընդօրինակութեան որոշ տեղեկութիւններ չկան Անեցու բնագրում, սակայն պահպանուել են այն օրինակում, որը շարունակելով իր Ժամանակագրութիւնն է կազմել Օրբէլեանը: Այդ յաւելումների մի մասին ծանօթանանք համադրման միջոցով: Սկզբում նշում ենք Անեցու բնագիրը (բերում ենք տեքստի այն մասը, որը ներկայացնում են հնագոյն ձեռագրերը, նշում հրատարակութեան էջը), երկրորդում՝ Անեցու Ժամանակագրութեան Օրբէլեանին պատկանած ձեռագրի համապատասխան հատուածը եւ երրորդում Հայրապետ Վարդապետի ձեռագրի տարբերութիւնը:

Համեմատութիւնը ցոյց է տալիս որ Հայրապետ Վարդապետի յաւելումները հիմնականում Ժամանակագրութեան տուեալներին աւելացուած բացատրական եւ տեղեկատուական բնոյթի լրացումներ են: Թէեւ դրանք մեծ մասամբ այլ աղբիւրներից յայտնի տուեալներ են, սակայն որոշ դէպքերում գգալի հետաքրքրութիւն են ներկայացնում (ինչպէս օրինակ, Սմբատ Ա-ին «տիեզերակալ» կոչելը, Ապլղարիբ Պահլաւունու «մարզպան» տիտղոսի յիշատակումը, Վահրամ Պահլաւունու՝ Ապուղամրի թոռը լինելը եւն.):

Սամուէլ Անեցի[19] (Հայոց) ՅԴ (855) Մեծաշուք բախտի պատահեալ Աշոտայ որդւոյ Սմբատայ՝ ամենայն նախնեացն գեր ի վերոյ եղեալ: (95)	Ստեփանոս Օրբէլեան	Հայրապետ Վարդապետ (Հայոց) ՅԴ (855) Մեծաշուք բախտի պատահեալն Աշոտ որդի Սմբատայ Խոստովանողի ամենեցուն նախնեացն գեր ի վերոյ եղեալ զընդ լծով կացեալքս լծաղիրս բազում ազանց կացոյց: (60բ)
ՊՀԴ (874): Աշոտ լեալ իշխանաց իշխան: (95)		ՊՀԴ (874): Աշոտ լեալ իշխանաց իշխան ի ԺԹ (19) ամի իւրոյ իշխանութեանն: (60բ)
ՊՁԷ (887), (Հայոց) ՅԼԴ (885) Աշոտ իշխանաց իշխան թագաւորեաց Հայոց ամս Ե(5): (95)		ՊՁԷ (887), (Հայոց) ՅԼԴ (885) Աշոտ Բագրատունի յետ ԻԲ (22) ամի իշխանութեան ի վերայ Հայոց թագաւորեաց ամս Ե (5): Սա առաջին թագաւոր ի Բագրատունեաց: (61ա)
ՊՂԲ (?), Սմբատ ամս ԻԴ (24): (95)		Սմբատ որդի Աշոտոյ, երկրորդ թագաւոր յետ հաւր իւր, սա կոչեցաւ Տիեզերակալ, որ եւ մարտիրոսացաւ: (61ա)
ՋԺԷ (917), (Հայոց) ՅԿԲ (913) Յետ սպանելոյն Սմբատայ թագաւորին տիեզերակալի ի ձեռաց ամբարշտին Յուսփայ՝ որդւոյ Ապուսիճբայ ոստիկանի եկելոյ ի		ՋԺԴ (914), (Հայոց) ՅԿԱ (912) Յաւուրս յայսոսիկ ոստիկան ոմն եկեալ ի Պարսից չար եւ գազանաբարոյ Յուսուփ անուն, որ էր եղբայր Ափշնայ եւ նորա որոպքին կոչէր, որդիք Ապուշիճայ

Հայս ի Դրւին քաղաքի կախեալ զփայտէ՝ անիշխան լեալ երկիրս ամս է (7): (98-99)		ամպարշտի, եւ դաւող եւ հնարիմաց նենգութեամբ ի ձեռն ածեալ զքագաւորն Հայոց զՍմբատ, որ տիեզերակալն կոչէր, որդի Աշոտի եւ վասն խոստովանելոյ զՔրիստոս կախեալ եղեւ զփայտէ ի Դրւին քաղաքի, նման գոլով Քրիստոսի՝ Տեառն իւրում, եւ զէ(7) ամ անիշխան կացին: 63ա
Հայոց՝ ՆԱ (952) Աշոտ որդի Աբասայ (հրատ. մէջ սխալմամբ՝ Սմբատայ) ամս ԻԷ (27): (100)		(Հայոց) ՆԱ (952) Աշոտ ամս ԻԷ (27), այս Աշոտ որդի Աբասայ Ողորմած կոչեցաւ, վասն որոյ եւ եղեւ իսկ: (64ա)
	Ի (Հայոց) ՆԺԷ (968) թիւն շինեցաւ Հաղբատ ի Խոսրովանոյշ թագուհոյ, կնոջէ Աշոտոյ Շահանշահի եւ ապա զկնի Ժ ամի՝ Սանահինն: (11)	Շինեաց ի Սեւորդիսն զհրաշալի զուխտսն զՀաղբատ եւ զՍանահինն կինն Աշոտայ Ողորմածին, Խոսրովանուշ վասն արեւշատութեան որդւոց իւրոց Գուրգենայ, Սմբատայ եւ Գագկայ ՆԺԵ (966) թվին: (64ա)
ՋՁԸ (Հայոց) ՆԼԶ (987) Սկիզբն շինուածոյ մեծանուն... ուխտին Մարմաշինոյ՝ ի քրիստոսասէր իշխանաց իշխանէն Վահրամայ: (103)	(Հայոց) ՆԼԶ (987) Սկիզբն շինուածոյ մեծանուն... ուխտին Մարմաշինոյ ի քրիստոսասէր իշխանէն Վահրամայ: (11)	(Հայոց) ՆԼԶ (987) Սկիզբն շինուածոյ մեծանուն... ուխտին Մարմաշինոյ ի քրիստոսասէր իշխանաց իշխանէն Վահրամայ, որ էր թոռն Ապուղամրի: (65ա)

(Հայոց) ՆԻԸ (979) Սմբատ Շահնշահ որդի Աշոտոյ ամս ԺԳ (13): Իսկ եւ իսկ ընդ թագաւորելն Սմբատայ լիր արկեալ պարիսպ քաղաքին Անւոյ բարձրաբերձ բրգամբք եւ լայնատարած տեղօք յԱխուրեան գետոյն մինչեւ ցԾաղկոցաձորն կոչեցեալ վայր.	(Հայոց) ՆԻԸ (979) Սմպատ Շահնշահ որդի Աշոտոյ ամս ԺԳ (13). իսկ եւ իսկ ընդ թագաւորելն Սմբատայ լիր արկեալ պարսպի քաղաքին Անոյ բարձրաբերձ բրգամբք եւ լայնատարած տեղաւք յԱխուրեան գետոյն մինչեւ ցԾաղկոցաձորն կոչեցեալ վայր.	(Հայոց) ՆԻԸ (979) Սմբատ Շահնշահ որդի Ողորմածին Աշոտոյ. սա ի սկզբան թագաւորութեան իւրոյ լիր արկէալ պարսպի քաղաքին Անւոյ մեծատարած տեղաւք ընդարձակագոյն քան զհին շինուածն, բարձրաբերձ բրգամբք հաստակառոյց վիմաւք ի կողմանէ ի կոէն, յարեւելից հիւսիսոյ մինչեւ յարեւմուտս հիւսիսոյ տողս արկեալ շինուածոյն յԱխուրեան գետոյ մինչեւ ցԾաղկոցաձորն կոչեցեալ վայր:
հիմնարկեաց եւ զկաթուղիկէն պայծառափառ ի նմին քաղաքի, զոր ոչ կարաց աւարտել՝ վասն կանխաժամ մահու կենաց իւրոց: (102-103)	հիմնարկեաց զկաթուղիկէն պայծառափառ ի նմին քաղաքի, զոր ոչ կարաց աւարտել վասն կանխաժամ մահու կենաց իւրոց: (11)	Դարձեալ նոյն թագաւոր Սմբատ շահնշահ յետ շինուածոյ քաղաքին հիմնարկէ զկաթուղիկէն պայծառափայլ ի նմին քաղաքի, չափ աշտիճանացն եւ երկուս կարգս ի տաճարէն, յորում կայ ի քառակողմն կուսէ անկեանցն դրոշմ գծոյ անուան նորա, եւ ոչ կարաց աւարտել վասն կանխաժամման մահու կենաց իւրոց: (65ա)
	(Հայոց) ՇԼԱ (1082) թուին Լիպարիտն տաճիկ եղեւ Կիւրիկէ Շաքոյ թագաւորն	(Հայոց) ՇԼԵ (1086) Լիպարիտն տաճիկ եղեւ եւ Կիւրիկէ Շաքոյ թագաւորն ի սուլդանն

	գնաց ի սուլտանն եւ դարձաւ անդրէն պատուով: (15)	չոգաւ եւ դարձաւ անդրէն պատուով: (70ա)
	(Հայոց) ՇԼԶ (1087) Ի սուլտանն գնացին Հայոց եւ Վրաց թագաւորքն Կիւրիկէ եւ Գաւրգի: (15)	(Հայոց) ՇԼԶ (1087) Ի սուլդանն գնացին Հայոց եւ Վրաց թագաւորքն Կիւրիկէ եւ Գաւրգի: (70ա)
	(Հայոց) ՇԿԹ (1120) Դաւիթ թագաւորն Վրաց էհար զԷլխազի եւ զՄլոքն: (17)	(Հայոց) ՇԿԷ (1118) Դաւիթ թագաւորն Ափղազաց զաւրացեալ խաչիւն Ք(րիստոս) հար զԷլխազի եւ զՄլոքտուղրիկն: (73ա)
(Հայոց) ՇԶ (1131) Փլաւ Ամենափրկիչն յԱնի ի մարերի ի ԺԵ (15): (129)	ՌՃԻԹ (1129) (Փլաւ) Ամենափրկիչն յԱնի ի մարերի ի ԺԵ (15), յաւուր հինգշաբթոջ: (17)	(Հայոց) ՇՀԹ (1130) Փլաւ Ամենափրկիչն յԱնի շինեալն յԱպլղարիփ մարզպանէն: (74բ)
(Հայոց) ՇՁԱ (1132) Մեռաւ Փատլուն ի պատերազմի տիրեալ ամս Է(7): Եւ յետ նորա եկաց եղբայր նորա Մահմուտ: (130)	(Հայոց) ՇՁԱ (1132) Մեռաւ Փատլուն ի պատերազմի տիրեալ ամս Է(7) եւ յետ նորա եկաց եղբայր նորա Մահմուտ: (17)	(Հայոց) ՇՁԱ (1132) Մեռաւ Փատլաւն ի պատերազմի եւ իշխեաց Անոյ եղբայր նորա Մահմուտն: (74բ)

Անեցու Ժամանակագրութեան տարբեր տեղերում կատարուած ընդօրինակութիւններում կամ տարբեր վայրերում պահուած ձեռագրերում նկատւում է մի օրինաչափութիւն՝ տուեալ տեղին առնչուող պատմական տեղեկութիւնների ներմուծում Ժամանակագրութեան մէջ: Օրինակ, Հռոմոսում ընդօրինակուած ձեռագրում վանքի Ս. Յովհաննէս եկեղեցու հիմնադրման մասին տեղեկութեան ներմուծումը (Մատենադարան, ձեռ. թիւ 3613, էջ 60բ)[20], կամ Հաւուց Թառի վանքի առաջնորդին պատկանած ձեռագրում այդ վանքի պատմութեան վերաբերեալ բազմաթիւ տեղեկութիւնների յաւելումը (Մատենադարան, ձեռ. թիւ 3681)[21]: Հայրապետ Վարդապետի ձեռագրում առաւել աչքի զարնողը Անիին վերաբերող հատուածներում կատարուած յաւելումներն են:

Դրանք ոչ միայն ճշգրիտ են, ինչպէս օրինակ Անիի Սմբատեան պարիսպների տեղադրութեան բնորոշումը՝ «յարեւելից հիւսիսոյ մինչեւ յարեւմուտս հիւսիսոյ տողս արկեալ», այլեւ երբեմն պարունակում են գարմանալի մանրամասներ։ Յատկապէս հետաքրքիր է Սմբատի հիմնադրած Կաթողիկէ եկեղեցու անկիւններում նրա անուան գրութեան փաստի արձանագրումը. «...չափ աշտիճանացն եւ երկուս կարգս ի տաճարէն, յորում կայ ի քառակողմն կուսէ անկեանցն դրոշմ գծոյ անուան նորա...»։ Այդ գրութիւններից մէկը բարերախտաբար պահպանուել է։ Արձանագրուած «ՍՄՊԱ(Տ)» անուան տեղադրութեան մասին Անիի վիմագրական ժողովածուում նշւում է՝ «արտաքուստ, հիւսիսային պատի արեւելեան անկիւնում»[22]։ Հնարաւոր է, որ Սմբատի «կանխաժամանն» մահը եւ Կաթողիկէի անաւարտ մնալն էր պատճառը, որ այս եղանակով արձանագրուել է նրա անունը, որը Հայրապետը բնորոշում է որպէս «դրոշմ գծոյ անուան նորա»։ Եկեղեցին անաւարտ էր, չէր գրուած շինարարական արձանագրութիւն եւ հնարաւոր է, որ հենց այդ պատճառով կեանքից հեռացած արքայի անունը գրուել է պատերի այն մասում, ուր հասել էր շինարարութիւնը։ Թերեւս պատերի բարձրութեան այդ չափն է նշել Հայրապետ Վարդապետը՝ «...չափ աշտիճանացն եւ երկուս կարգս ի տաճարէն...»։ Կարծում ենք, որ այս ձեւակերպումը հնարաւոր կը լինի ճիշտ մեկնաբանել, երբ յայտնի լինի թէ Սմբատի անուան գրութիւնը գետնից կամ գետնախարսխից ինչ բարձրութեան վրայ է գտնւում։

Անիին քաղաքանօթ լինելու վկայութիւն է նաեւ Ս. Փրկչի քանդուելու առիթով («Փլաւ Ամենափրկիչն յԱնի») եկեղեցու կառուցողի մասին Հայրապետ Վարդապետի կատարած յաւելումը՝ «...շինեալն յԱպլղարիփ մարզպանէն»։ Ապլղարիրի պաշտօնը նշուած է Ս. Փրկչի 1036ին շինարարական արձանագրութեան մէջ. «ԵՍ ԱՊԼՂԱՐԻՊ ՄԱՐԶՊԱՆ... ՇԻՆԵՑԻ ԶՍՈՒՐԲ ՓՐԿԻՉՍ...»[23]։

Կատրամիդէ Թագուհու հովանաւորութեամբ Անիի Կաթողիկէ Եկեղեցու կառուցման աւարտին նուիրուած հատուածում, Հայոց ՆԾԷ (1008) թուականի դիմաց Հայրապետն աւելացնում է Սմբատից բացի Գագիկ Ա.-ի միւս եղբօր անունը՝ «...եղբայր Սմբատայ եւ Գուրգենայ» (էջ 65բ)։ Բայց աւելի հետաքրքիր է, որ Թագուհու անունը, որն Անեցին նշում է «Կատրամիդէ»[24] ձեւով, ինչպէս միւս հայ պատմիչները, Հայրապետը գրում է «Կտրանիդէ» (էջ 94ա), ինչպէս որ Կաթողիկէ Եկեղեցու շինարարական արձանագրութեան մէջ է[25]։

Հայրապետ Վարդապետի միւս յաւելումներին չենք անդրադառնում, քանի որ դրանցից ամէն մէկն էլ կարող է օգտակար լինել այս կամ այն հարցի պատմութեամբ զբաղուողների համար, ինչպէս որ արդէն իսկ եղել է «տիեզերական» տիտղոսի խնդրի ուսումնասիրութեան ժամանակ, որի առաջին կրողը Սմբատ Ա. Բագրատունին էր[26]:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Սամուէլ Անեցու Ժամանակագրութեան Հայրապետ Վարդապետի, ամենայն հաւանականութեամբ ԺԳ. դարում եւ Անիի շրջանում կատարած ընդօրինակութիւնը, ունի պատմական որոշակի արժէք ներկայացնող յաւելումներ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Սամուէլի Քահանայի Անեցւոյ Հաւաքմունք Ի Գրոց Պատմագրաց՝ Յաղագս Գիւտի Ժամանակաց Անցելոց Մինչեւ Ի Ներկայս, Ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 1893: Այսուհետեւ իբրեւ երակէտ վերցնում ենք այս հրատարակութիւնը:

[2] Կարէն Մաթեւոսեան, «Սամուել Անեցու Ժամանակագրութեան Հնագոյն Ձեռագրերը», Ակադեմիկոս Նիկողայոս Մառի Մեծագեան 140 Եւ Մահուան 70ամեակների Տարեվերջի Ժողովածու, խմբագիր՝ Պարոյր Մուրադեան, Երեւան, 2005, էջ 37-48, նոյնի՝ «Սամուէլ Անեցին Անիի Պատմութեան Մասին», Էջմիածին, 2006, Բ-Գ, էջ 72-85:

[3] Սամուէլի Քահանայի, էջ ԺԸ:

[4] Ցուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, հտր. Ա., Երեւան, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1965, սիւնակ 669-670:

[5] Ցիշատակագրութիւններից մէկում Հայրապետը յիշատակում է իր երկու եղբայրներին՝ «...զեղբարս իմոց Կարապետին եւ զԽաչատրին յիշեայ, ո՞վ պատուական վերծանող եղբայր ի Քրիստոս» (ԺԳ. Դարի Հայերէն Ձեռագրերի Ցիշատակարաններ, կազմեց Արտաշէս Մաթեւոսեան, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1984, էջ 905):

[6] Մանր Ժամանակագրութիւններ, հտր. 1, կազմեց Վազգէն Յակոբեան, Երեւան, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, 1951, էջ 20:

[7] Մատենադարան, ձեռ. 1897, էջ 1ա: Հմմտ.՝ Սամուէլի Քահանայի, էջ 3:

[8] ԺԳ. Դարի, էջ 905: Այս եւ յաջորդ մէջբերումներում ընդգծումները մերն են - Կ.Մ.:

[9] Սամուէլի Քահանայի, էջ 120:

[10] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, հրատ. պատրաստեց Աշոտ Աբրահամեան, Երեւան, 1942, էջ 16:

[11] Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860, էջ 61:

[12] Ռաֆայէլ Մաթեւոսեան, Տաշիր-Ջորագետ, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1982, էջ 105:

[13] Մատենադարան, ձեռ. 5619, էջ 105բ:

[14] Սամուէլի Քահանայի, էջ 132: Հատուածը մօտաւորապէս նոյնն է Օրբէլեանի մօտ (էջ 17):

[15] Հրաչեայ Աճառեան, Հայոց Անձնանունների Բառարան, հտր. Ա., Երեւան, Երեւանի Պետական Համալսարան, 1942, էջ 557։

[16] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւն, Երեւան, 1961, էջ 200։

[17] Հրաչեայ Աճառեան, Հայոց Անձնանունների Բառարան, հտր. Դ., Երեւան, Երեւանի Պետական Համալսարան, 1948, էջ 412։

[18] Կորիս անունով բնակավայր գոյութիւն ունի Ախալքալաքի շրջանում (Թադէոս Յակոբեան, Ստեփան Մելիք-Բախչեան, Յովհաննէս Բարսեղեան, Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, հտր. 3, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1991, էջ 234)։ Չի բացառւում, որ Հնում Կորիս անունով բնակավայր գոյութիւն ունեցած լինի Գուգարաց լեռներից սկիզբ առնող Կորիսան գետի (Կուրի վտակ) շրջանում։

[19] Ընդհանրապէս Անեցին նշում է երկու հիմնական թուական՝ Քրիստոսի ծնունդից, եւ՝ Հայոց։ Այս երկուսի միջեւ սովորաբար երկու տարուայ տարբերութիւն կայ։ Աւելի ճիշտը Հայոց թուականն է, քանի որ այդ տուեալները հաստատւում են նաեւ այլ աղբիւրներով։

[20] Մաթեւոսեան, «Սամուել Անեցու», էջ 42։

[21] Կարէն Մաթեւոսեան, «Հաւուց Թառի Վանքի Եւ Ապիրատեան Տոհմի Պատմութեան Նորայայտ Տուեալներ», Բանբեր Մատենադարանի, 17, Երեւան, 2006, էջ 149-162։

[22] Դիւան Հայ Վիմագրութեան, պր. 1, Անի Քաղաք, կազմեց Յովսէփ Օրբէլի, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1966, էջ 36։

[23] Նոյն, էջ 44։

[24] Սամուէլի Քահանայի, էջ 105։

[25] Դիւան Հայ Վիմագրութեան, պր. 1, էջ 35։

[26] Հայրապետ Մարգարեան, «Բագրատունի Թագաւորների «Տիեզերակալ» Տիտղոսը», ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտ, Հայոց Պատմութեան Հարցեր, Գիտական Յօդուածների Ժողովածու, թիւ 6, Երեւան, 2005, էջ 99-106։

HAYRAPET VARDAPET'S MANUSCRIPT OF SAMUEL ANETSI'S *CHRONOLOGY*

(Summary)

KAREN MATEVOSSIAN

In classical Armenian historiography the twelfth century Armenian historiographer Samuel Anetsi, the vicar of the mother Church of Ani, was famous for his *Chronogy*, which covers Armenian history until 1163.

Karen Matevossian notes that in 1893, father Arshak Ter-Mikelian published the comprehensive text of this *Chronology* after making extensive additions to it, based on the 14 manuscript-copies and variants of the *Chronology* that were in his hands.

However, the author contests that Ter-Mikelian did not pay adequate attention to the oldest manuscript copy, which belonged to Hayrapet Vardapet, probably copied in the 13th century. Matevossian wonders whether Ter-Mikelian chose not to make use of that copy because the information it contained was more concise and different from the other manuscripts.

Matevossian focuses on the content of the said version and, after various textual comparisons with the one published by Ter-Mikelian, concludes that the version of Hayrapet Vardapet has iumportant historical data that should not be overlooked.